ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-10-6-Ա

ք. Երևան 24.10.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում քննարկեց 2019 թվականի օգոստոսի 20-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Գոլդն գրեյպ արմաս» ՍՊԸ (Երևան, Արամ Խաչատրյան 18, բն. 61, AM) բողոքը (No20181521) «ARMAS» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված 29-րդ, 32-րդ և 33-րդ դասերի ապրանքների համար ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող «Chateau ARMAS» («Բիզնես Լիդեր Հոլդինգ» ՍՊԸ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3/15, N-18403, 21.05.2012թ., դաս 32, 33), «ԱՐՄԱՇ АРМАШ ARMASH» (Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ» ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Արարատ, Պուշկինի 12, N-20318, 02.09.2013թ., դաս 33) և «ARMES» («Երկսար» ՍՊԸ, ք. Երևան, Փափազյան 21/1, բն. 45, N-17531, 19.09.2011թ., դաս 29, 32, 33) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի, 122-րդ կետի համաձայն՝ բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները և համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր, և որոնք ունեն ձայնային նմանություն, որոնց

նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով: Համեմատելով հայտարկված ապրանքային նշանը ավելի վաղ «Chateau ARMAS» ապրանքային նշանի հետ՝ նիշերը զուգորդվում են իրենց «ARMAS» համընկնող գրառումներով, իսկ համակցված «ԱՐՄԱՇ АРМАШ ARMASH» ավելի վաղ ապրանքային նշանի հետ համեմատելիս, նիշերը զուգորդվում են «ARMAS» և «ARMASH» գրառումներով և տարբերվում են զուտ վերջին «H» տառով, որն էլ էական դեր չի կատարում համեմամտվող նիշերը տարբերել մեկը մյուսից: Ինչ վերաբերում է «ARMES» ավելի վաղ ապրանքային նշանին՝ տվյալ դեպքում համեմատվող նիշերը զուգորդվում են իրենց համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, այն է «ARMAS» և «ARMES»: Անդրադառնալով Ձեր նկատառումներին, առ այն, որ համեմատվող նիշերի փաստացի օգտագործումը տարբերվում է մեկը մյուսից, տեղեկացնում ենք Ձեզ, որ փորձաքննության արդյունքները վերաբերում են հայտարկված բառային ապրանքային նշանին, այլ ոչ թե նրան ինչպես օգտագործվում է, իսկ օգտագործվող համակցված ապրանքային նշանը կարող է ձևակերպվել որպես առանձին հայտ:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող «Chateau ARMAS» («Բիզնես Լիդեր Հոլդինգ» ՍՊԸ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3/15, N-18403, 21.05.2012թ., դաս 32, 33), «ԱՐՄԱՇ АРМАШ ARMASH» (Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Ձ» ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Արարատ, Պուշկինի 12, N-20318, 02.09.2013թ., դաս 33) և «ARMES» («Երկսար» ՍՊԸ, ք. Երևան, Փափազյան 21/1, բն. 45, N-17531, 19.09.2011թ., դաս 29, 32, 33) բառային և համակցված ապրանքային նշաններին:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և շարունակում էր պնդել բողոքում նշված իր հիմնավորումները:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ARMAS» (No20181521) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փոր ձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ